17637

324
Ц - 21

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

VIII ՀՐԱՎԵՐԻ ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ
VI ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

Q-21

91

ՆԱԽԱԳԻԾ

# ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԿՈՒ—ԲԴՐ. ԿԳԿ—1938

324
Q-21

14 FEB 2013
17637
68 91
15 JAN 2010
ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
26 SEP 2006
91

ԳԼՈՒԽ I

## ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 1.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի հիման վրա Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորների ընտրությունները ընտրողների կողմից կատարվում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 2.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 142-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրությունները ընդհանուր են. Ադրբեջանական ԽՍՀ բոլոր քաղաքացիները, որոնք հասել են 18 տարվան, անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի մեջ, բացառությամբ խելագարների և այն անձերի, որոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով:

ՀՈԴՎԱԾ 3.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 143-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրությունները հավասար են.— յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրությունների մասնակցում են հավասար հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 4.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 144-րդ հոդվածի հիման վրա կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են տղամարդկանց հետ համահավասար:

ՀՈԴՎԱԾ 5.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 145-րդ հոդվածի հիման վրա Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ համահավասար:

ՀՈԴՎԱԾ 6.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 149-րդ հոդվածի հիման վրա ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական յակրուգների:

ԳԼՈՒԽ II

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 7.—Ընտրողների ցուցակները կազմվում են քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհրդի կողմից, իսկ ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ ռայոնական Խորհրդի կողմից. գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների գյուղական Խորհրդի կողմից:

ՀՈԴՎԱԾ 8.—Ընտրողների ցուցակների մեջ մտցվում են ընտրությունների օրը 18 տարին լրացրած այն բոլոր քաղաքացիները, որոնք ունեն ընտրական

իրավունք և ցուցակները կազմելու մոմենտին բնակվում են (մշտական կամ ժամանակավորապես) տրվյալ Խորհրդի տերիտորիայում:

ՀՈԴՎԱԾ 9.—Ընտրողների ցուցակների մեջ չեն մտցվում այն անձերը, վորոնք դատական վճռով ընտրական իրավունքներից զրկված են ընտրական իրավունքներից զրկելու վերաբերյալ դատավճռի մեջ սահմանված ամբողջ ժամանակամիջոցում, ինչպես նաև այն անձերը, վորոնք որենքով սահմանված կարգով ճանաչված են խելագար:

ՀՈԴՎԱԾ 10.—Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ յուրաքանչյուր ընտրական շրջանի, այրբենական կարգով, մատնանշելով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքն ու բնակության վայրը և ստորագրվում են աշխատավորների պատգամավորների Խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից:

ՀՈԴՎԱԾ 11.—Ընտրողներից վոչ վոք չի կարող մտցվել մեկից ավելի ընտրական ցուցակի մեջ:

ՀՈԴՎԱԾ 12.—Այն ընտրողների ցուցակները, վորոնք գտնվում են զինվորական մասերում և զորական միավորումներում, կազմվում են հրամանատարության կողմից, հրամանատարի և զինվորական կոմիսարի ստորագրություններով: Մյուս բոլոր զինվորական ծառայողներն ընտրողների ցուցակների մեջ մտցվում են ըստ բնակության վայրի՝ աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդների կողմից:

ՀՈԴՎԱԾ 13. — Հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին և բուժական մյուս հիմնարկներին կից ստեղծվող ընտրական շրջանների ընտրողների ցուցակները կազմվում են ինչպես հիվանդ քաղաքացիների համար, այնպես և ընտրությունների որը հերթապահության մեջ գտնվող բժշկական անձնակազմի համար:

Ընտրություններին մասնակցել չեն կարող սկարլատինային յեվ դիֆտերիտային բաժանմունքներում գտնվող հիվանդները:

ՀՈԴՎԱԾ 14.—Ընտրություններից 30 որ առաջ աշխատավորների պատգամավորների Խորհուրդը կախում է ընտրողների ցուցակները՝ ընդհանուրի գիտության համար, կամ ընտրողների համար հնարավորություն է ապահովում այդ ցուցակներին ծանոթանալու Խորհրդի շենքում:

ՀՈԴՎԱԾ 15.—Ընտրողների ցուցակների բնագիրը պահվում է համապատասխանորեն՝ աշխատավորների պատգամավորների Խորհրդում և զինվորական մասում կամ զորական միավորման մեջ:

ՀՈԴՎԱԾ 16.—Այն դեպքում, յերբ ընտրողն ընտրողների ցուցակի հրապարակման և ընտրությունների որվա միջև ընկած ժամանակամիջոցում փոխում է իր բնակության վայրը, աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդը նրան տալիս է կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ձևի «քվեարկության իրավունքի վկայական» և ընտրողների ցուցակի մեջ նշում է — «մեկնեց». նոր բնակավայրում—մշտական կամ ժամանակավոր—ընտրողը մտցվում է ընտրողների ցուցակի մեջ, ներկայացնելով անձնական վկայական, ինչպես նաև «քվեարկության իրավունքի վկայական»:

ՀՈԴՎԱԾ 17.—Ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ (ցուցակների մեջ չմտցնելը, ցուցակներից հանելը, ազգանվան, անվան, հայրանվան աղավաղումը, ընտրական իրավունքներից զրկված անձերի սխալ կերպով ցուցակների մեջ մտցնելը) հայտարարությունը տրվում է աշխատավորների պատգամավորների այն Խորհրդին, վորը հրապարակել է ցուցակները:

ՀՈԴՎԱԾ 18.—Աշխատավորների պատգամավորների Խորհրդի Գործադիր Կոմիտեն պարտավոր է յերեք որվա ընթացքում քննություն առնել ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու մասին տրված յուրաքանչյուր հայտարարություն:

ՀՈԴՎԱԾ 19.—Ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ հայտարարությունը քննարկելուց հետո աշխատավորների պատգամավորների Խորհրդի Գործադիր Կոմիտեն պարտավոր է կա՛մ անհրաժեշտ ուղղումներ մտցնել ընտրողների ցուցակի մեջ, կա՛մ հայտարարություն տվողին գրավոր տեղեկանք տալ նրա հայտարարությունը մերժելու մոտիվների մասին. աշխատավորների պատգամավորների Խորհրդի վորոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայտարարություն տվողը կարող է բողոք՝ ներկայացնել ժողովրդական դատարանին:

ՀՈԴՎԱԾ 20.—Ժողովրդական դատարանը պարտավոր է յերեք որվա ընթացքում դատական դռնբաց նիստում, հայտարարություն տվողի և Խորհրդի ներկայացուցչի ներկայությամբ, քննության առնել ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ բողոքը և իր վճիռն անհապաղ հայտնել ինչպես հայտարարություն տվողին, այնպես և Խորհրդին: Ժողովրդական դատարանի վճիռը վերջնական է:

## ԳԼՈՒԽ III

## ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 21.—Ադրբեջանյան ԽՍՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի հիման վրա Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրվում է Ադրբեջանյան ԽՍՀ քաղաքացիների կողմից, ըստ ընտրական ոկրուգների:

ՀՈԴՎԱԾ 22.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգը կազմվում է այս սկզբունքով. 10.000 բնակիչ՝ յուրաքանչյուր ոկրուգին: Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգ ուղարկում է մեկ պատգամավոր:

ՀՈԴՎԱԾ 23.—Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգները

կազմվում են Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից:

ՀՈԴՎԱԾ 24.— Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական ակրուգների ցանկը հրապարակվում է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից, ընտրությունների օրը նշանակելու հետ միաժամանակ:

## ԳԼՈՒԽ IV

## ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 25.—Ընտրական բյուլետեններն ընդունելու և ձայները հաշվելու համար, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական ակրուգների մեջ մտնող քաղաքների ու ռայոնների տերիտորիան բաժանվում է ընտրական շրջանների:

ՀՈԴՎԱԾ 26.—Ընտրական շրջանները կազմվում են քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների կողմից, ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների կողմից, գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների կողմից:

ՀՈԴՎԱԾ 27.—Ընտրական շրջանները կազմվում են վոչ ուշ քան ընտրություններից 45 օր առաջ:

ՀՈԴՎԱԾ 28.—Գյուղխորհրդի տերիտորիան, որն ունի վոչ ավելի քան 2000 բնակիչ, կազմում է, իբրև կանոն, մեկ ընտրական շրջան. յուրաքանչյուր գյուղում կամ բնակավայրում, որոնք ունեն 500-ից մինչև վոչ ավելի քան 2000 բնակիչ, կազմակերպվում է առանձին ընտրական շրջան:

500 մարդուց քիչ, բայց 300 մարդուց վոչ ցածր ազգաբնակություն ունեցող գյուղերում կամ գյուղերի խմբում, այն դեպքերում, երբ ընտրական շրջանի կենտրոնից այդպիսի գյուղերի հեռավորությունը 10 կիլոմետրից ավել է, կարող են կազմվել առանձին ընտրական շրջաններ:

ՀՈԴՎԱԾ 29.—Լեռնային և քոչվորական շրջաններում, որտեղ գերակշռում են մանր բնակավայրերը, թույլատրվում է կազմակերպել ընտրական շրջաններ 100 հոգուց վոչ պակաս բնակչությամբ. առանձին լեռնային և քոչվորական շրջաններում Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության թույլտվությամբ թույլատրվում է կազմակերպել ընտրական շրջաններ 100 հոգուց պակաս, բայց 50 հոգուց վոչ պակաս բնակչությամբ:

ՀՈԴՎԱԾ 30.—Այն քաղաքները, բանվորական ավանները, ինչպես նաև գյուղերն ու գյուղխորհրդի տերիտորիան, որոնք ունեն 2000 բնակչից ավելի, ընտրական շրջանների բաժանվում են այս հաշվով՝ մեկ ընտրական շրջան 1500—2500 բնակչին:

ՀՈԴՎԱԾ 31.— Նախիջևանի ԱԽՍՀ քաղաքների, գյուղերի և գյուղխորհուրդների տերիտորիայի համար, որոնք ունեն ավելի քան 2000 բնակիչ,





թույլատրվում է կազմակերպել ընտրական շրջաններ՝ ազգաբնակության 500—1500 հոգուն մի ընտրական շրջանի հաշվով:

ՀՈԴՎԱԾ 32.—Զինվորական մասերը և զորական միավորումները կազմում են առանձին ընտրական շրջաններ, վոչ պակաս քան 50 և վոչ ավելի քան 1500 ընտրողներով, որոնք մտնում են ընտրական ակրուգի մեջ, ըստ այն վայրի, որտեղ գտնվում է զորամասը կամ զորական միավորումը:

ՀՈԴՎԱԾ 33.—Այն հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին, հաշմանդամների տներին կից, որոնք ունեն առնվազն 50 ընտրող, ստեղծվում են առանձին ընտրական շրջաններ:

Մի քանի կորպուս ունեցող հիվանդանոցներում թույլատրվում է առանձին կորպուսներին կից, նրանցից յուրաքանչյուրում վոչ պակաս քան 50 ընտրող լինելու դեպքում, կազմակերպել ընտրական շրջաններ:

Այն հիվանդանոցներում և մյուս բուժական հիմնարկներում, որտեղ առանձին ընտրական շրջաններ չեն կազմակերպվում, թույլատրվում է ընտրական բյուլետենների ընդունումը հենց հիվանդանոցներում ու բուժական հիմնարկներում՝ ընտրական հանձնաժողովների առանձնացված անդամների կողմից: Այդ դեպքերում հիվանդանոցներին մատակարարվում են առանձին ընտրական արկղներ:

ՀՈԴՎԱԾ 34.—Վոչ պակաս քան 50 ընտրող ունեցող այն նավերը, որոնք ընտրությունների օրը նավարկության մեջ են գտնվում, կարող են կազմել առանձին ընտրական շրջաններ, որոնք մտնում են ընտրական ակրուգների մեջ, ըստ այն վայրի, որտեղ դրանցված է նավը:

## ԳԼՈՒԽ V

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

ՀՈԴՎԱԾ 35.— Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից՝ ընտրությունների օրը հրապարակվելու հետ միաժամանակ:

ՀՈԴՎԱԾ 36.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 10 անդամից:

ՀՈԴՎԱԾ 37.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

ա) Ադրբեջանական ԽՍՀ ամբողջ տերիտորիայում հսկում է ընտրությունների ընթացքում «Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» անշեղ կատարման վրա.

բ) քննում և ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները և բողոք-

ների առթիվ կայացնում է վերջնական վճիռներ.

գ) սահմանում է կնիքների, ընտրական տուփերի նմուշները, «քվեարկության իրավունքի վկայականի» ձևը, ընտրական բյուլետենների և նրանց, ծրարների ձևը ու գույնը, ընտրողների ցուցակի ձևը, ձայները հաշվելու արձանագրությունների ձևը, ընտրվելու վերաբերյալ վկայականի ձևը.

դ) գրանցում է Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի մեջ ընտրված պատգամավորներին.

ե) Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի մանդատային հանձնաժողովին է հանձնում ընտրությունների վերաբերյալ գործավարությունը:

ՀՈԴՎԱԾ 38.—Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական okրուգում կազմվում է Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Okրուգային ընտրական հանձնաժողով:

ՀՈԴՎԱԾ 39.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Okրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից, իսկ Նախիջևանի ԱԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի տերիտորիաներում՝ Նախիջևանի ԱԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի կողմից, վոչ ուշ քան ընտրություններից 55 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 40.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Okրուգային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 6 անդամից:

ՀՈԴՎԱԾ 41. — Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Okրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) հսկում է, վորպեսզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեներն ընտրական շրջանները ժամանակին կազմակերպեն.

բ) սահմանում է ընտրական շրջանների համարներն ըստ կարգի.

գ) հսկում է ընտրողների ցուցակները ժամանակին կազմելու և ընդհանուրի գիտությանը հասցնելու վրա.

դ) գրանցում է Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուներին, վորոնք առաջադրված են Ադրբեջանյան ԽՍՀ Սահմանադրության և «Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» պահանջների պահպանումով.

ե) Շրջանային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է ընտրական բյուլետեններ ու սահմանված ձևի ծրարներ.

զ) հաշվում է ձայները և վորոշում ընտրությունների արդյունքները՝ ըստ okրուգի.





ը) կենտրոնական ընտրական հանձնաժողովին է ներկայացնում ընտրությունների վերաբերյալ գործավարությունը.

թ) ընտրված պատգամավորին վկայական է տալիս ընտրվելու մասին:

ՀՈԴՎԱԾ 42.—Շրջանային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների կողմից, իսկ ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների կողմից. գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների կողմից—վոչ ուշ քան ընտրություններից 40 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 43.—Շրջանային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 2—6 անդամից:

ՀՈԴՎԱԾ 44.—Շրջանային ընտրական հանձնաժողովը՝

ա) ընտրական շրջանում կատարում է ընտրական բյուլետենների ընդունումը.

բ) հաշվում է Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի յուրաքանչյուր պատգամավորության թեկնածուին տրված ձայները.

գ) ընտրությունների գործավարությունը հանձնում է Okրուգային ընտրական հանձնաժողովին:

ՀՈԴՎԱԾ 45.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Okրուգային և Շրջանային ընտրական հանձնաժողովների նիստերը վավերական են համարվում, եթե նրանց մասնակցում է հանձնաժողովների ընդհանուր կազմի կեսից ավելին:

ՀՈԴՎԱԾ 46.— Ընտրական հանձնաժողովներում բոլոր հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ. ձայները հավասար լինելու դեպքում—նախագահի ձայնը գերակշռություն է տալիս:

ՀՈԴՎԱԾ 47.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների հետ կապված ծախսերը կատարվում են պետության հաշվին:

ՀՈԴՎԱԾ 48.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Okրուգային և Շրջանային ընտրական հանձնաժողովներն ունեն իրենց կնիքը՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով:

## ԳԼՈՒԽ VI

## ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 49.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի համար թեկնածուներ առաջադրելու իրավունքն Ադրբեջանյան ԽՍՀ Սահմանադրության 149-րդ

հողվածի հիման վրա ապահովվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ կոմունիստական կուսակցական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, կոոպերատիվների, յերիտասարդության կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների յեվ այլ կազմակերպությունների համար, վորոնք գրանցված են որենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 50.—Թեկնածու առաջադրելու իրավունքն իրականացնում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ինչպես կենտրոնական որգանները, նույնպես և նրանց հանրապետական, մարզային ու շրջանային որգանները, համասարապես և բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները ձեռնարկություններում, կոլմիրանակալինների ընդհանուր ժողովները—գորամասերում, ինչպես և գյուղացիների ընդհանուր ժողովները—կոլտնտեսություններում, խորհանտեսությունների բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները—խորհանտեսություններում:

ՀՈԴՎԱԾ 51.—Պատգամավորության թեկնածուները չեն կարող լինել Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովների, ինչպես նաև Շրջանային ընտրական հանձնաժողովների անդամներ, այն ոկրուգի, վորտեղ նրանք առաջադրված են վորպես պատգամավորության թեկնածու:

ՀՈԴՎԱԾ 52.—Վոչ ուշ քան ընտրություններից 30 որ առաջ, Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուներ առաջադրող՝ աշխատավորների բոլոր հասարակական կազմակերպությունները կամ ընկերությունները պարտավոր են պատգամավորության թեկնածուներին գրանցել Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովում:

ՀՈԴՎԱԾ 53.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են գրանցել Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության այն բոլոր թեկնածուներին, վորոնք առաջադրվել են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների կողմից, պահպանելով Ադրբեջանյան ԽՍՀ Սահմանադրության յեվ «Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» պահանջները:

ՀՈԴՎԱԾ 54.—Աշխատավորների այն հասարակական կազմակերպությունը կամ ընկերությունը, վորոնք Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածու յեն առաջադրում, պարտավոր են ներկայացնել Ոկրուգային ընտրական հանձնաժողովին հետևյալ փաստաթղթերը.

ա) պատգամավորության թեկնածու առաջադրած ժողովի կամ նիստի արձանագրությունը, վորն ստորագրված է լինում նախագահության անդամների կողմից, վորի մեջ նշված է լինում նրանց տարիքը,





բնակատեղը, թեկնածու առաջադրած կազմակերպության անունը, մատնանշված և լինում պատգամավորության թեկնածու առաջադրած ժողովի կամ նիստի տեղը, ժամանակը և մասնակիցների թիվը, ընդվորում արձանագրության մեջ պետք է մատնանշված լինեն պատգամավորության թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, նրա տարիքը, բնակատեղը, կուսակցականությունը, դրադմունքը.

բ) Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության այն թեկնածուի հայտարարությունը, վորը համաձայնություն է տվել քվեարկվելու տվյալ ընտրական ոկրուգում իրեն առաջադրող կազմակերպության կողմից:

ՀՈԴՎԱԾ 55.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուն կարող է քվեարկվել միայն մի ոկրուգում:

ՀՈԴՎԱԾ 56.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի հրաժարումը պատգամավորության թեկնածուին գրանցելուց՝ կարող է բողոքարկվել յերկու որվա ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, վորի վորոշումը վերջնական է:

ՀՈԴՎԱԾ 57.—Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի յուրաքանչյուր գրանցված պատգամավորության թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, դրադմունքը, կուսակցականությունը և թեկնածուին առաջադրող հասարակական կազմակերպության անունը հրապարակում է Ոկրուգային ընտրական հանձնաժողովը, վոչ ուշ քան ընտրություններից 25 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 58.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության բոլոր գրանցված թեկնածուները պարտադիր կարգով պետք է մտցվեն ընտրական բյուլետենի մեջ:

ՀՈԴՎԱԾ 59.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են վոչ ուշ քան Ադրբեջանյան Գերագույն Խորհրդի ընտրություններից 15 որ առաջ տպագրել և բոլոր Շրջանային ընտրական հանձնաժողովներին ուղարկել ընտրական բյուլետենները:

ՀՈԴՎԱԾ 60.—Ընտրական բյուլետենները տպագրվում են համապատասխան ընտրական ոկրուգի ազգաբնակության լեզուներով:

ՀՈԴՎԱԾ 61.—Ընտրական բյուլետենները տպագրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով և այնպիսի քանակությամբ, վոր ապահովվի ընտրական բյուլետենների մատակարարումը բոլոր ընտրողներին:

ՀՈԴՎԱԾ 62.—Յուրաքանչյուր կազմակերպության համար, վորն առաջադրել է Ոկրուգային ընտրական հանձնաժողովում գրանցված թեկնածու, հավասարապես և Ադրբեջանյան ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացու համար իրավունք և ապահովվում անարգել ագիտացիա մղելու այդ թեկնածուի ոգտին ժողովներում, մամուլում, և այլ յեղանակներով, համաձայն Ադրբե-

Ջանյան ԽՍՀ Սահմանադրության 132-րդ հոդվածի:

## ԳԼՈՒԽ VII

## ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 63.— Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունները կատարվում են մի որվա ընթացքում, որն ընդհանուր է Ադրբեջանյան ԽՍՀ համար:

ՀՈԴՎԱԾ 64.—Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների որը սահմանում է Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը, վոչ ուշ քան ընտրությունների ժամկետից 2 ամիս առաջ: Ընտրությունները կատարվում են վոչ աշխատանքային որը:

ՀՈԴՎԱԾ 65.—Ընտրություններին մնացած վերջին 20 որվա ընթացքում Շրջանային ընտրական հանձնաժողովն ամեն որ հրապարակում կամ վորևե այլ միջոցով ընտրողներին լայնորեն ծանուցանում է ընտրությունների որվա և ընտրությունների տեղի մասին:

ՀՈԴՎԱԾ 66.—Ընտրողներն իրենց ձայները տալիս են ընտրությունների որը, առավոտյան ժամը 6-ից մինչև գիշերվա ժամը 12-ը տեղական ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 67.—Ընտրությունների որը, առավոտյան ժամը 6-ին, Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում է քվեատուփերը և ընտրողների՝ սահմանված ձևով կազմված ցուցակի առկայությունը, վորից հետո փակում ու կնքում է տուփերը հանձնաժողովի կնիքով և հրավիրում է ընտրողներին սկսել ձայներ տալը:

ՀՈԴՎԱԾ 68.—Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ, այդ նպատակով ներկայանալով քվեարկության համար հատկացված չենքը. ընդվորում ընտրողներն իրենց ձայները տալիս են ընտրական բյուլետենը փակ ծրարով քվեատուփի մեջ գցելով:

ՀՈԴՎԱԾ 69.—Ընտրությունների չենքում՝ բյուլետենները լրացնելու համար հատկացվում է առանձին սենյակ, վորտեղ քվեարկության ժամանակ արգելվում է, բացի քվեարկողներից, վորևե մեկի, ներառյալ նաև Շրջանային ընտրական հանձնաժողովի անդամների, ներկայությունը. բյուլետենները լրացնելու համար միքանի ընտրողներ միաժամանակ ներս թողնելիս սենյակը պետք է ունենա միջնորմներ կամ շիրմաներ՝ միաժամանակ ներս թողնվող ընտրողների թվի համեմատ:

ՀՈԴՎԱԾ 70.—Ընտրական չենքը յեկած ընտրողը Շրջանային ընտրական հանձնաժողովի քարտուղարին ներկայացնում է կամ անձնագիրը, կամ կոլտնտեսային գրքույկը, կամ արհմիութենական տոմսը, կամ վորևե այլ անձնական վկայական և, ընտրողների ցուցակով ստուգվելուց ու ընտրողների ցուցակում նշվելուց հետո, ստանում է ընտրական բյուլետեն ու սահմանված ձևի ծրար:





ՀՈԴՎԱԾ 71.—Այն անձերի համար, վորոնք ընտրությունների չենքն են ներկայացել «քվեարկության իրավունքի վկայականով», համաձայն սույն՝ «Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» 16-րդ հոդվածի, Շրջանային ընտրական հանձնաժողովը կազմում է հատուկ ցուցակ, վորը կցվում է ընտրողների ցուցակին:

ՀՈԴՎԱԾ 72.—Ընտրական բյուլետենները լրացնելու համար հատկացված սենյակում ընտրողը ընտրական բյուլետենում թողնում է այն թեկնածուի ազգանունը, վորին ձայն է տալիս ինքը, ջնջելով մյուսներինը. բյուլետեներ դնելով ծրարի մեջ ու փակցնելով ծրարը, ընտրողն անցնում է այն սենյակը, վորտեղ գտնվում է Շրջանային ընտրական հանձնաժողովը, և ընտրական բյուլետեն պարունակող ծրարը գցում է քվեատուփի մեջ:

ՀՈԴՎԱԾ 73.—Այն ընտրողները, վորոնք անգրագիտության կամ վորևե ֆիզիկական թերության պատճառով հնարավորություն չունեն ինքնուրույն կերպով լրացնելու ընտրական բյուլետենը, իրավունք ունեն ընտրական բյուլետենների լրացման սենյակը հրավիրել վորևե մի այլ ընտրողի՝ ընտրական բյուլետեներ լրացնելու համար:

ՀՈԴՎԱԾ 74.—Ձայներ տալու ժամանակ ընտրական չենքում՝ ընտրական ագիտացիա չի թույլատրվում:

ՀՈԴՎԱԾ 75.—Ընտրական չենքում կարգապահության համար պատասխանատվություն է կրում հանձնաժողովի նախագահը, և նրա կարգադրությունները բոլոր ներկա գտնվողների համար պարտադիր են:

ՀՈԴՎԱԾ 76.—Ընտրությունների որվա գիշերը, ժամը 12-ին, Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայներ տալն ավարտված է հայտարարում, և հանձնաժողովն սկսում է բանալ քվեատուփերը:

## ԳԼՈՒԽ VIII

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 77.—Այն չենքում, վորտեղ Շրջանային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, հաշվելու ժամանակ ներկա գտնվելու իրավունք ունեն աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ դրա համար հատկապես լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները:

ՀՈԴՎԱԾ 78.—Շրջանային ընտրական հանձնաժողովը, բաց անելով քվեատուփերը, գցած ծրարների թիվը համեմատում է քվեարկությանը մասնակցած անձերի թվի հետ և ստուգման արդյունքները մտցնում է արձանագրության մեջ:

ՀՈԴՎԱԾ 79.—Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը բաց է անում ծրարները և Շրջանային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների ներ-

կայությամբ կարգում է քվեարկման արդյունքներն ըստ յուրաքանչյուր բյուլետենի։

ՀՈԴՎԱԾ 80.—Յուրաքանչյուր պատգամավորության թեկնածուի համար կազմվում է հաշվային թերթիկ՝ 2 օրինակ—հանձնաժողովի քարտուղարի կողմից և Երջանային ընտրական հանձնաժողովի՝ դրա համար լիազորված անդամների կողմից։

ՀՈԴՎԱԾ 81.—Վավերական չեն համարվում՝

ա) չհամոնված ձևի ու գույնի բյուլետենները.

բ) առանց ծրարի կամ չհամոնված ձևի ծրարով տրված բյուլետենները.

գ) այն բյուլետենները, որոնք պարունակում են ընտրվելիք պատգամավորների թվից ավելի թեկնածուներ։

ՀՈԴՎԱԾ 82.—Ընտրական բյուլետենի վավերական լինելու նկատմամբ տարակուսանք ծագելու դեպքում՝ հարցը լուծում է Երջանային ընտրական հանձնաժողովը քվեարկության միջոցով, որը նշվում է արձանագրության մեջ։

ՀՈԴՎԱԾ 83.—Երջանային ընտրական հանձնաժողովը կազմում է քվեարկության սահմանված ձևի արձանագրություն՝ յերկու օրինակ, որոնք ստորագրում են Երջանային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, այդ թվում՝ պարտադիր կերպով նախագահն ու քարտուղարը։

ՀՈԴՎԱԾ 84.—Երջանային ընտրական հանձնաժողովի քվեարկության արձանագրության մեջ պետք է մատնանշված լինի.

ա) քվեարկությունն սկսվելու և վերջանալու ժամանակը.

բ) ընտրողների ցուցակով ձայն տված ընտրողների թիվը.

գ) «քվեարկության իրավունքի վկայականներով» ձայն տված ընտրողների թիվը.

դ) տրված ծրարների թիվը.

ե) Երջանային ընտրական հանձնաժողովին տրված հայտարարությունների ու բողոքների հակիրճ բովանդակությունը, և Երջանային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները.

զ) ձայները հաշվելու արդյունքներն ըստ յուրաքանչյուր թեկնածուի։

ՀՈԴՎԱԾ 85.—Ձայների հաշվելը վերջանալուց և արձանագրությունը կազմվելուց հետո հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ։

ՀՈԴՎԱԾ 86.—Երջանային ընտրական հանձնաժողովի կազմած՝ քվեարկության արձանագրության մի օրինակը, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուների հաշվային թերթիկների յերկու օրինակի հետ մասին 24 ժամվա ընթացքում տուրհանդակի միջոցով ուղարկվում է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 87.—Բոլոր ընտրական բյուլետենները (վավերականներն առանձին և վոչ-վավերական ձա-





նաչվածները առանձին) պետք է կնքվեն Երջանային ընտրական հանձնաժողովի կնիքով և, քվեարկության արձանագրության յերկրորդ օրինակի ու կնիքի հետ միասին Երջանային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հանձնվեն պահելու՝ քաղաքներում — աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդներին, իսկ ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում—աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդներին, գյուղական վայրերում — աշխատավորների պատգամավորների չրջանային Խորհուրդներին։

ՀՈԴՎԱԾ 88.—Աշխատավորների պատգամավորների Խորհրդի վրա պարտականություն է դրվում պահելու ընտրական բյուլետենները, մինչև վոր համապատասխան ոկրուգի պատգամավորի մանդատը հաստատվի Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից։

ՀՈԴՎԱԾ 89.— Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը ձայները հաշվում է Երջանային ընտրական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա։

ՀՈԴՎԱԾ 90.—Այն չենքում, վորտեղ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, հաշվելիս ներկա գտնվելու իրավունք ունեն աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների դրա համար հատկացրած լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 91.—Ոկրուգային ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուի համար կազմում է 2 օրինակ հաշվային թերթիկ, վորտեղ նշվում է յուրաքանչյուր պատգամավորության թեկնածուի ստացած ձայների թիվը։

ՀՈԴՎԱԾ 92.—Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կազմում է քվեարկման արձանագրություն՝ 2 օրինակից, որոնք ստորագրում են Ոկրուգային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, այդ թվում՝ պարտադիր կերպով նախագահն ու քարտուղարը։

ՀՈԴՎԱԾ 93.—Ոկրուգային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ պետք է մատնանշված լինի՝

ա) ոկրուգի ընտրողների ընդհանուր թիվը.

բ) քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը.

գ) յուրաքանչյուր պատգամավորության թեկնածուին տրված ձայների թիվը.

դ) Ոկրուգային ընտրական հանձնաժողովին տրված հայտարարությունների ու բողոքների հակիրճ բովանդակությունը և Ոկրուգային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները։

ՀՈԴՎԱԾ 94.—Ձայների հաշվելը վերջանալուց ամենաուշը 24 ժամ հետո, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային

ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է արձանագրության առաջին որինակը, հաշվային թերթիկների հետ միասին, կնքված, սուրհանդակի միջոցով ուղարկել կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

ՀՈԴՎԱԾ 95.—Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության այն թեկնածուն, վորն ստացել է ձայների բացարձակ մեծամասնություն, այսինքն, ոկրուգում տրված և վավերական ճանաչված բոլոր ձայների կեսից ավելին, ընտրված է համարվում:

ՀՈԴՎԱԾ 96.—Արձանագրությունն ստորագրվելուց հետո Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը հրապարակում է ընտրությունների արդյունքները և Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրված պատգամավորության թեկնածուին վկայական է տալիս ընտրվելու մասին:

ՀՈԴՎԱԾ 97.—Յեթե թեկնածուներից վոչ մեկը ձայների բացարձակ մեծամասնություն չի ստացել, համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովն այդ նշում է արձանագրության մեջ առանձին և հաղորդում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ու միաժամանակ հայտարարում է ձայների ամենամեծ թիվն ստացած յերկու թեկնածուների վերաքվեարկում, ինչպես նաև նշանակում է վերաքվեարկման որը վոչ ուշ, քան ընտրությունների առաջին շրջանը լրանալուց 2 շաբաթ հետո:

ՀՈԴՎԱԾ 98.—Յեթե ոկրուգում տրված ձայների թիվը կազմում է այդ ոկրուգում քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների կեսից պակաս մասը, Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովն այդ նշում է արձանագրության մեջ առանձին և անհապաղ հաղորդում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ըստ որում այդ դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություններ վոչ ուշ քան առաջին ընտրություններից հետո յերկու շաբաթ ժամանակամիջոցում:

ՀՈԴՎԱԾ 99.—Պատգամավորության թեկնածուների վերաքվեարկումը, հավասարապես նաև վոչ-վավերական ճանաչվածների փոխարեն կատարվելիք նոր ընտրությունները տեղի յեն ունենում առաջին ընտրությունների համար կազմված՝ ընտրողների ցուցակներով և լիովին համապատասխան սույն՝ «Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության»:

ՀՈԴՎԱԾ 100.—Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորի դուրս գալու դեպքում Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը 2 շաբաթվա ընթացքում համապատասխան ընտրական ոկրուգում նշանակում է նոր պատգամավորի ընտրությունների ժամկետը, սակայն վոչ ուշ քան Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորի դուրս գալուց հետո 2 ամիս ժամանակամիջոցում:





ՀՈԴՎԱԾ 101.—Ամեն վոք, ով բռնության, խաբեության, սպառնալիքների կամ կաշառքի միջոցով խոչընդոտ կհանդիսանա Ադրբեջանյան ԽՍՀ քաղաքացուն՝ Ադրբեջանյան ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր ընտրելու կամ ընտրվելու իր իրավունքն իրականացնելու գործում, — պատժվում է ազատազրկմամբ մինչև 2 տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 102.—Խորհրդի այն պաշտոնատար անձը կամ ընտրական հանձնաժողովի անդամը, վորը կկեղծի ընտրական փաստաթղթերը կամ դիտավորյալ կերպով սխալ կհաշվի ձայները,—պատժվում են ազատազրկմամբ մինչև 3 տարի ժամանակով:

# ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

«ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ-Ի ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

*Ադրբեջանյան ԽՍՀ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը վորոշում է՝*

*Հավանություն տալ «Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» նախագծին և այն մտցնել Ադրբեջանյան ԽՍՀ-ի 8-րդ Հրավերի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 6-րդ նստաշրջանի քննարկմանը:*

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահի պարտականությունները կատարող՝ Մ. Բ. ԿԱՍՈՒՄՈՎ.

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Մ. ՄԻՐԿԱԴԻՐՈՎԱ.

*Բաքու, 1938 թ. փետրվարի 23.*



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԻԾԸ

Գլուխ I
ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ . . . . . . . . . . 3
Գլուխ II
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ . . . . . . . . 3
Գլուխ III
ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՕԿՐՈՒԳՆԵՐԸ . . 5
Գլուխ IV
ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ . . . . . . . . . 6
Գլուխ V
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ . . . . . . 7
Գլուխ VI
ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ . . . . . . . . . . . . . . 9
Գլուխ VII
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ . . . . . . . . . 12
Գլուխ VIII
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ . . . . . . . . . . . . . 13
ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ 18

Сдано в производство 25/II-38 г.
Разрешено к печати 25/II-38 г.
Колич. печ. знаков 56420
Колич. печ. листов 18/4

Главлит № 1003 Тип. „III Интернационал“ Баку, ул. Саратовца-Ефимова, 29
Зак. № 841 Тираж 100

1 ԱՐ

«Ազգային գրադարան»
NL0194321